Հաստատում եմ
Տնօրեն. Ն. Գրիգորյան
31.08.2023թ

Արմավիրի մարզի Վաղարշապատի
Գ. Նժդեհի անվան թրվ 8
հիմնական դպրոց

# 2023 – 2024 ուստարի

# <u>ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ</u>
# <u>ՊԼԱՆ</u>

<u>ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ</u>
<u>ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ՓՈԽՏՆՕՐԵՆ</u>
<u>ՔՐԻՍՏԻՆԱ ՆԵՐՍԵՍԻ ՆԱԶԱՐՅԱՆ</u>

# Դաստիարակչական աշխատանքների պլանավորումը դպրոցում

## Մասնագիտացված կրթական աջակցությունների գծով դպրոցի փոխտնօրենի տարեկան համալիր աշխատանքային պլան

### Բացատրագիր

Տարբեր սեմինարների, խորհրդակցությունների, զրույցների ժամանակ դպրոցների մասնագիտացված կրթական աջակցությունների (ՄԿԱ) գծով փոխտնօրենները և դասղեկներն առավել հաճախ մեզ հարցնում են, թե իրենց ո՛ր աշխատանքները պետք է պլանավորեն և ինչպես, և կա՞ արդյոք օրինակելի պլան, որն առանց փոփոխության կարելի է օգտագործել: Միանգամից պատասխանենք հարցերից երկրորդին: Ինչպե՞ս է հնարավոր ունենալ նմուշօրինակ պլան բոլոր դպրոցների համար, երբ դպրոցները տարբերվում են իրենց հնարավորություններով, ավանդույթներով, գործելակերպով և բազմաթիվ այլ առանձնահատկություններով: Հետևաբար մենք չենք ընդունում մեկ, միասնական, բոլորի համար նույնատիպ պլան ունենալու գաղափարը, այլ նախընտրում ենք մեր գործընկերներին տալ պլանների ճկուն օրինակներ, որոնք, փոփոխելով, կարելի է հարմարեցնել սեփական պահանջներին:

ՄԿԱ գծով դպրոցի փոխտնօրենի աշխատանքն ընդգրկուն է և բազմաբնույթ: Չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ՝ նրա աշխատանքային պարտականություններն իրենց ընդգրկմամբ զիջում են միայն տնօրենի աշխատանքին: Նրա գործունեության թիրախ խմբերը հետևյալն են՝

1. Մանկավարժական աշխատողներ
   - դասղեկներ
   - ուսուցիչներ
   - սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ
   - դպրոցի հեգեբան
   - սոցիալական մանկավարժ,
   - ներառական կրթության բազմամասնագիտական թիմ

2. Աշակերտներ
    - աշակերտական խորհուրդ
    - սոցիալապես անապահով երեխաներ
    - անցանկալի վարք ունեցող երեխաներ
3. Ծնողներ
    - ծնողական խորհուրդ,
    - ծնողական համայնք
4. Արտադասարանական խմբակներ
5. Ղեկավար և սպասարկող անձնակազմ
    - տնօրեն
    - ուսումնական գծով փոխտնօրեն
    - գրադարանավար
6. Պետական և հասարակական կառույցներ
    - ոստիկանություն (ոստիկանության՝ անչափահասների գործերով աշխատակից)
    - հասարակական և միջազգային կազմակերպություններ

Անկասկած՝ աշխատանքը հստակ և արդյունավետ իրականացնելու համար ՄԿԱ գծով փոխտնօրենը պետք է նախապես պլանավորի աշխատանքի բոլոր ուղղությունները: Մեր կարծիքով պլանավորման ձևի ընտրության տարբերակները երկուսն են՝ պատրաստել յուրաքանչյուր թիրախ խմբի հետ աշխատանքի համար առանձին պլաններ կամ պատրաստել բոլոր ուղղություններով տարբեր աշխատանքների մեկ համալիր պլան: Առաջին տարբերակը պարզ է և լրացուցիչ մանրամասնելու կարիք չունի, սակայն մեր փորձը ցույց է տալիս, որ միանգամից 6-7 տարբեր պլաններ ունենալու հեռանկարը փոխտնօրեններին վախեցնում է: Այս պատճառով էլ ներկայացնում ենք համալիր պլանի մի տարբերակ, որն ընդունելի կլինի մի քանի առանձին պլաններ գրել չցանկացողների համար:

Հիշեցնում ենք, որ պլանի այս ձևը, որ ներկայացնում ենք՝ ո՛չ պարտադիր է, ո՛չ էլ միակը: Ավելին՝ այն ըստ մասերի առանձնացնելով դուք կունենաք ձեր տարբեր ուղղություններով աշխատանքներն իրականացնելու համար առանձին պլանների օրինակներ: Օրինակ՝ այս պլանից կարող եք առանձնացնել աշակերտների հետ աշխատանքը և թողնել միայն աշխատանքները գործընկերների և ծնողների հետ: Տարբերակները կարող են լինել շատ տարբեր և մենք պատրաստ ենք քննարկել բոլոր առաջարկները: Ամեն դեպքում խորհուրդ ենք տալիս հիշել, որ ցանկացած պլանի

նպատակն է՝ սպառիչ և առավելագույնս հստակ ներկայացնել բոլոր աշխատանքները՝ դրանք ժամանակին արդյունավետ իրականացնելու համար:

Պլաններն աղյուսակով ներկայացնելն օգնում է, որ դրանք ավելի ակնառու լինեն, և մենք հենց այդ կերպ էլ ներկայացրել ենք մեր օրինակը: Եթե ցանկանում եք առավել մանրամասնել ձեր աշխատանքը, կարող եք ավելացնել նոր սյունակներ, եթե ուզում եք ավելի հստակեցնել աշխատանքների ուղղությունները՝ կարող եք նոր տողեր ավելացնել:

Առաջարկվող տարբերակի յուրաքանչյուր տողում, ուր ներկայացված է թիրախ խումբը, պլանն ավելի հիմնավորված դարձնելու համար բերված է ՄԿԱ գծով տնօրենի տեղակալի պաշտոնային պարտականությունների այն կետը[1], որը վերաբերում է խմբի հետ կատարվելիք աշխատանքներին:

Ներկայացված պլանային միջոցառումները նույնպես միայն օրինակներ են: Դրանց և՛ թիվը, և՛ տեսակը կարող եք փոխել կամ լրացնել՝ համապատասխանեցնելով ձեր նպատակին:

Մասնագիտացված կրթական աջակցությունների տնօրենի տեղակալի
տարեկան աշխատանքային պլանի օրինակ

| | Միջոցառման (աշխատանքի) անվանումը | Կատարող/ Պատասխանատու | Ժամկետը, աշխատանքի պարբերականությունը | Նշումներ |
|---|---|---|---|---|
| **1. Աշխատանք մանկավարժական աշխատողների[2] հետ** | | | | |
| Դասղեկներ<br>Պաշտոնային պարտականությունը[3]. Կազմակերպել և վերահսկել դասղեկների գործունեությունը | | | | |
| 1. | Դասղեկների աշխատանքային պլանների մշակման վերհսկում և ներկայացում հաստատման | Դասղեկներ/ ՄԿԱ փոխտնօրեն | Սեպտեմբեր | |
| 2. | Դասղեկական ժամերի մշտադիտարկում | ՄԿԱ փոխտնօրեն | Պարբերաբար | |
| 3. | Սեմինար-խորհրդակցություններ դասղեկների հետ կամ աշխատանք դասղեկական մեթոդմիավորման[4] հետ | ՄԿԱ փոխտնօրեն | Ամեն ամիս | |
| 4. | և այլն | | | |
| Ուսուցիչներ[5]<br>Պաշտոնային պարտականությունը. Ուսումնական հաստատության, նրա ստորաբաժանումների մեթոդական միավորումների ղեկավարներին և մանկավարժական աշխատողներին գործնական օգնություն ցույց տալ ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում | | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Դասալսումներ՝ դասի դաստիարակչական կողմը գնահատելու նպատակով | ՄԿԱ փոխտնօրեն | Պարբերաբար | |
| 2. | Սեմինար-խորհրդակցություններ՝ նվիրված դասալսումների վերլուծությանը | ՄԿԱ փոխտնօրեն | Պարբերաբար | |
| 3. | և այլն | | | |

Ներառական կրթության բազմամասնագիտական թիմ (եթե կա)

Պաշտոնային պարտականությունը.Մասնակցել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ կրթություն ստանալու իրավունքի իրականացմանը ։

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Ներառական կրթության բազմամասնագիտական թիմ Տարեկան պլանի քննարկում | Բազմամանագիտական թիմ/ ՄԿԱ փոխտնօրեն | Սեպտեմբեր | |
| 2. | Կատարված աշխատանքի վերահսկողություն՝ (պարբերականությունը կարելի է որոշել կախված դպրոցի և խնդիրների առանձնահատություններից) վերլուծություն, քննարկում, գնահատում | ՄԿԱ փոխտնօրեն/ Բազմամանագիտական թիմ | Պարբերաբար | |
| 3. | և այլն | | | |

## 2. Աշխատանք աշակերտների հետ

Պաշտոնային պարտականությունները.

-Աշխատանք տանել սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ

-Հսկողություն իրականացնել սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ.

- Կազմակերպել սովորողների հանգիստն ու ժամանցը

Աշակերտական խորհուրդ

Պաշտոնային պարտականությունը. Աջակցել դպրոցական ինքնավարությանը

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Աշակերտական ընդհանուր ժողով | Տնօրեն/ ՄԿԱ փոխտնօրեն | Ըստ դպրոցի ԱԽ կանոնադրության | |
| 2. | Դասարանական խորհուրդների ձևավորում | Դասղեկներ/ ՄԿԱ փոխտնօրեն | Ըստ դպրոցի ԱԽ կանոնադրության | |
| 3. | Աշակերտական խորհրդի ձևավորում | Կազմակերպիչ/ՄԿԱ | Ըստ դպրոցի ԱԽ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | փոխտնօրեն | կանոնադրության | |
| 4. | Աշակերտական խորհրդի նախագահի ընտրություն | Կազմակերպիչ/ ՄԿԱ փոխտնօրեն | Ըստ դպրոցի Ախ կանոնադրության | |
| 5. | Աշակերտական խորհրդի ժողով | Կազմակերպիչ/ ՄԿԱ փոխտնօրեն | Ըստ դպրոցի Ախ կանոնադրության | |
| 6. | և այլն | | | |
| Սոցիալապես անապահով երեխաներ<br>Պաշտոնային պարտականությունը. Միջոցներ ձեռնարկել սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցույց տալու համար | | | | |
| 1. | Սոցիալապես անապահով երեխաների բացահայտում և հաշվառում | ՄԿԱ փոխտնօրեն | | |
| 2. | | | | |
| Անցանկալի վարք ցուցաբերող երեխաներ<br>Պաշտոնային պարտականությունը. Աշխատանք տանել սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ | | | | |
| 1. | Անցանկալի վարք ցուցաբերող երեխաների հաշվառում | ՄԿԱ փոխտնօրեն/կազմա-կերպիչ, դասղեկ | Ըստ անհրաժեշտության | |
| 2. | Անցանկալի վարքի պատճառների ուսումնասիրություն և համապատասխան աշխատանքի պլանավորում | ՄԿԱ փոխտնօրեն/ դասղեկ, սոցիալական մանկավարժ, հոգեբան, ծնող | Ըստ անհրաժեշտության | |
| 3. | Հակաիրավական և հանցագործ վարք ցուցաբերող երեխաների հետ աշխատանք | ՄԿԱ փոխտնօրեն/ դասղեկ, սոցիալական մանկավարժ, հոգե-բան, ծնող, ոստիկա-նության անչափա-հասների գործերով աշխատակից | Ըստ անհրաժեշտության | |

| Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ<br>Համագործակցություն ՄԿԱ փոխտնօրենի և կազմակերպիչ պաշտոնային պարտականությունների շրջանակում | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Կազմակերպչի տարեկան աշխատանքային պլանի համատեղ մշակում և ներկայացում հաստատման | Կազմակերպիչ/ ՄԿԱ փոխտնօրեն | Սեպտեմբեր | |
| 2. | Աշակերտական խորհրդի աշխատանքների համատեղ պլանավորում և վերահսկում | Կազմակերպիչ/ ՄԿԱ փոխտնօրեն | Հոկտեմբեր | |
| 3. | և այլն | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | կատարում, համագործակցություն | փոխտնօրեն/Տնօրեն | անհրաժեշտության | |
| 3. | և այլն | | | |
| Ուսումնական գծով փոխտնօրեն | | | | |
| 1. | Դասալսումների համաձայնեցում և պլանավորում | ՄԿԱ փոխտնօրեն/ Ու.ս.գծով փոխտնօրեն | Պարբերաբար | |
| 2. | Համադպրոցական միջոցառումների պլանավորում և գնահատում | ՄԿԱ փոխտնօրեն/ Ու.ս..գծով փոխտնօրեն | Ըստ անհրաժեշտության | |
| 3. | և այլն | | | |
| Տնտեսական գծով փոխտնօրեն | | | | |
| 1. | Դպրոցի նյութատեխնիկական բազայի զարգացման ուղղությամբ համագործակցություն | ՄԿԱ փոխտնօրեն/ Տնտ. գծով փոխտնօրեն | Ըստ անհրաժեշտության | |
| 2. | և այլն | | | |
| Գրադարանավար | | | | |
| 1. | Համատեղ միջոցառումների պլանավորում | ՄԿԱ փոխտնօրեն/ Գրադարանավար և այլոք | պարբերաբար | |
| 2. | և այլն | | | |
| | | | | |
| 7. Պետական և հասարակական կառույցներ | | | | |
| Ոստիկանության անչափահասների գործերով աշխատակից | | | | |
| 1. | Հակաիրավական և հանցագործ վարք ցուցաբերող | ՄԿԱ փոխտնօրեն/ | Ըստ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4. | և այլն | | | |
| **3. Աշխատանք ծնողների հետ**<br>Պաշտոնային պարտականությունը. Ապահովել հաստատության և սովորողի ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը | | | | |
| 1. | Համադպրոցական ծնողական ժողովներ | ՄԿԱ փոխտնօրեն/ դասղեկներ | Պարբերաբար | |
| 2. | Հանդիպում ծնողների հետ | ՄԿԱ փոխտնօրեն/ դասղեկներ | Ըստ անհրաժեշտության | |
| 3. | և այլն | | | |
| **4. Ղեկավար և սպասարկող անձնակազմ**<br>Համագործակցել գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով. | | | | |
| Տնօրեն | | | | |
| 1. | Աշխատանքային պլանների քննարկում և հաստատում | ՄԿԱ փոխտնօրեն/Տնօրեն | Ըստ անհրաժեշտության | |
| 2. | Ընթացիկ հանձնարարականների, աշխատանքների | ՄԿԱ | Ըստ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | երեխաների հետ աշխատանք | Ոստ.անչ.գործերով աշխատակից | անհրաժեշտության | |
| 2. | | | | |
| Հասարակական և միջազգային կազմակերպություններ | | | | |
| 1. | Աջակցել հասարակական կամ միջազգային կազմակերպությունների կողմից դպրոցում անցկացվող միջոցառումների, դասընթացների և այլ աշխատանքների իրականացմանը | ՄԿԱ փոխտնօրեն/ տնօրեն | Ըստ անհրաժեշտության | |
| 2. | | | | |

## Անցանկալի վարք ցուցաբերող երեխաներ

Աշխատանք տանել սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոններիապահովման ուղղությամբ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Անցանկալի վարք ցուցաբերող երեխաների հաշվառում | ՄԿԱՓոխտնօրեն, ԴԱԿ Դասվար – դասղեկներ | Ըստ անհրաժեշտության | |
| 2. | Անցանկալի վարքի պատճառների ուսումնասիրություն ևհամապատասխան աշխատանքի պլանավորում | ՄԿԱՓոխտնօրեն, ԴԱԿ Դասվար – դասղեկներ | Ըստ անհրաժեշտության | |
| 3. | Հակաիրավական և հանցագործ վարք ցուցաբերողերեխաների հետ աշխատանք | ՄԿԱՓոխտնօրեն, ԴԱԿ Դասվար – դասղեկներ | Ըստ անհրաժեշտության | |

## Աշխատանք ծնողների հետ

Ապահովել հաստատության և սովորողի ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Համադպրոցական ծնողական ժողովներ | Տնօրեն/ ՄԿԱ փոխտնօրեն | Պարբերաբար | |
| 2. | Հանդիպում ծնողներիհետ | ՄԿԱ փոխտնօրեն/ | Ըստ պահանջի | |
| 3. | Ծնողների պարտականությունների իրազեկում Նրանց տարբեր աշխատանքներում ներգրավում | ՄԿԱ Փոխտնօրեն, Դասվար – դասղեկներ | Ըստ պահանջի | |
| 4. | Դասագրքերի,թեմատիկ տետրերի ձեռքբերման աշխատանքների կազմակերպում | ՄԿԱ Փոխտնօրեն, Դասվար – դասղեկներ | Տարվա ընթացքում | |
| 5. | Դասարանական ծնողական խորհուրդների ձևավորում | ՄԿԱ Փոխտնօրեն, Դասվար – դասղեկներ | Սեպտեմբեր | |
| 6. | Դպրոցի ծնողական խորհրդի ձևավորում, ծնողական խորհրդի նախագահի ընտրություն | ՄԿԱ Փոխտնօրեն, Դասվար – դասղեկներ | Ըստ ԾԽ կանոնադրության | |
| 7. | Ծնողական համայնքի ներգրավումը դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում | ՄԿԱ Փոխտնօրեն, Դասվար – դասղեկներ | Տարվա ընթացքում | |
| 8. | | | | |

# ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

1.Նպատակը

2.Ուղղությունները

- Ընդհանուր կարգապահական աշխատանքներ
- Կազմակերպչական աշխատանքներ
- Աշխատանք ուսուցիչների հետ
- Աշխատանք աշակերտների հետ
- Աշխատանք հատուկ մոտեցում պահանջող աշակերտների հետ
- Աշխատանք ծնողական խորհրդի հետ

3.Դաստիարակչական աշխատանքների պլանավորումը ըստ բնույթի

- Ռազմահայրենասիրական դաստիարակություն
- Հոգևոր դաստիարակություն
- Բարոյական դաստիարակություն
- Գեղագիտական դաստիարակություն
- Ֆիզիկական դաստիարակություն
- Էկոլոգիական դաստիարակություն
- Աշխատանքային դաստիարակություն

2023-2024 ուստարվա արտադասարանական դաստիարակչական աշխատանքների պլանը շարադրել հետևյալ բաժիններով

1. Ուսումնական աշխատանք
2. Կազմակերպչական աշխատանք
3. Աշխատանք դասվար-դասղեկների հետ
4. Արտադասարանական- արտադպրոցական խմբակների հետ տարվող աշխատանքներ
5. Աշխատանք աշակերտական խորհրդի հետ
6. Աշխատանք ծնողների հետ
7. Աշխատանք գրադարանի հետ
8. Գեղագիտական դաստիարակություն
9. Ռազմահայրենասիրական դաստիարակություն
10. Ֆիզիկական դաստիարակություն
11. Անչափահասների կողմից կատարվող իրավախախտումների նախականխման միջոցառումներ
12. Բնապահպանական դաստիարակություն
13. Բարոյական դաստիարակություն
14. Աշխատանքային դաստիարակություն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

1. Ստեղծել աշակերտական խորհուրդ և հետևել, որպեսզի գործեն կազմավորված հանձնախմբերը:
2. Հետևել, որ կանոնավոր ձևով կատարվի դպրոցական հերթապահությունը: Նրանում ընդգրկել դասարանական խորհուրդներին և ուսուցիչներին:
3. Հետևել, որ թարմացվեն դպրոցական վահանակների նյութերը:
4. Կազմակերպել և արդյունավետ անցկացնել դպրոցական տոները, հանդեսները:
5. Կազմակերպել էքսկուրսիաներ դեպի ազգային հերոսամարտի վայրեր, Արցախ:
6. Հաճախակի կազմակերպել մարզահանդեսներ, մրցումներ, արշավներ:
7. Կոլեկտիվ հաճախել համաքաղաքային միջքաղաքային միջոցառումներին՝ թատրոն,համերգներ:
8. Դպրոցում կազմարկեպել լավագույն կատարողների մրցույթ ստուգատեսներ:
9. Մեծ ուշադրություն դարձնել հատկապես տղաների ռազմական պատրաստությանը, կազմակերպել տարբեր ռազմահայրենասիրական միջոցառումներ:
10. Հետևել արտադասարանական խմբակների պարապմունքներին:
11. Մշտապես կապ պահպանել արտադպրոցական հիմնարկների հետ՝ մշակույթի տուն, մանկապատանեկան կենտրոն, երաժշտական, նկարչական դպրոցներ, գեղարվեստի դպրոց:
12. Սիստեմատիկ կապ պահպանել անչափահասների մանկական տեսչությունում:
13. Կարգավորել դասվար-դասղեկների հետ տարվող աշխատանքը:
14. Ստեղծել ծնողական խորհուրդ և օգնել կազմակերպելու դպրոցի ծնողկոմիտեի աշխատանքները:
15. Հետևել դպրոցում ստեղծված կանաչ գոտիների պահպանմանը:

Դպրոցի դասարանների դաստիարակչական աշխատանքները ղեկավարելու համար դասվար-դասղեկներ են նշանակվել

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Սահակյան | Ռուզան | 1-ին ա |
| 2. | Հովհաննիսյան | Ստելլա | 1-ին բ |
| 3. | Թագուշյան | Գայանե | 2-րդ ա |
| 4. | Հարությունյան | Նարինե | 2-րդ բ |
| 5. | Սահակյան | Լուսինե | 3-րդ ա |
| 6. | Հայրապետյան | Աիդա | 3-րդ բ |
| 7. | Վարդանյան | Նարինե | 4-րդ ա |
| 8. | Ղոմաջյան | Արմինե | 4-րդ բ |
| 9. | Սահակյան | Էլիզա | 5-րդ ա |
| 10. | Մարգսյան | Լուսինե | 5-րդ բ |
| 11. | Բաբայան | Մեդա | 6-րդ |
| 12. | Գրիգորյան | Ազատուհի | 7-րդ ա |
| 13. | Գևորգյան | Հռիփսիկ | 7-րդ բ |
| 14. | Նազարյան | Գոհար | 8-րդ ա |
| 15. | Հակոբյան | Մարիամ | 8-րդ բ |
| 16. | Պետրոսյան | Աղելա | 9-րդ ա |
| 17. | Գրիգորյան | Նարինե | 9-րդ բ |

Մեթոդմիավորումների նախագահներ են նշանակվել

Մեդա Բաբայան — հումանիտար առարկաներ

Գոհար Նազարյան — բնագիտամաթեմատիկական առարկաներ

Արմինե Ղոմաջյան — տարրական դասարաններ

# Դասղեկների հետ տարվող աշխատանքները

1.Աշակերտներին ծանոթացնել դպրոցի ներքին կարգապահական կանոններին

2.Աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրության ուսումնասիրում և մասսայականացում

3. Աշխատանք ներառված աշակերտների հետ

4. Աշակերտներին դասագրքերով ապահովում

5. Համատեղ աշխատանք արտադպրոցական, արտադասարանական խմբերի հետ

6. Օգնության կազմակերպում կարիքավոր երեխաներին

7.Աշխատանք դասարանական խորհուրդների հետ

8.Աշակերտներին ընդգրկել արտադասարանական խմբակներում

9.Կազմակերպել միջոցառումներ , էքսկուրսիաներ,արշավներ, գրքի քննարկումներ,

10.Աշխատանքներին ընդգրկել գրադարանի ակտիվի մեջ

11. Աշակերտների օրվա ռեժիմի սահմանում և պահպանում

12. Ծնողական ժողովների հրավիրում

13. Դասղեկի ժամերի կազմակերպում

14. Հերթապահության և ինքնասպասարկման աշխատանքների կազմակերպում դասարանական անկյան ստեղծում, գույքի խնամք

ԱՇԽԱՏԱՆՔ ԴԱՍՎԱՐ-ԴԱՍՂԵԿՆԵՐԻ ՀԵՏ
ԴԱՍՂԵԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Օգնել դասվար-դասղեկներին կազմել ուսումնադաստիարակչական աշխատանքների աշխատանքային պլանը և ներկայացնել հաստատման:

Սեպտեմբերի 1-15
ՄԿԱ գծով տնօրենի տեղ.

Դասղեկներից պահանջել աշխատանքային պլանի հիմքում ամրագրել հետևյալ դրույթները.

1. Ստեղծել դասարանական ամուր կոլեկտիվ, աշակերտներին տալ հայեցի դաստիարակություն, նրանց մեջ արթնացնել ազգային արժանապատվություն և հպարտություն, դաստիարակության հիմքում դնել հիմնական դպրոցի շրջանավարտի նկարագրի պահանջները:

Ուս. տարվա ընթացքում
Տնօրեն, ՄԿԱ գծով տնօրենի տեղ.
Դասվարներ, դասղեկներ

2. Շաբաթը մեկ անգամ անցկացնել դասղեկի ժամ և այն ծառայեցնել երեխաների բազմակողմանի դաստիարակության և մանկական առողջ կոլեկտիվի ձևավորման նպատակին:Հաճախակի անդրադառնալ աշակերտների մոտ վարքի, կենցաղի, կուլտուրայի հմտությունների ձևավորման հարցերին:

Ուս. տարվա ընթացքում
Տնօրեն, ՄԿԱ գծով տնօրենի տեղ.
Դասվարներ, դասղեկներ

3. Հետևողական աշխատանքի միջոցով հնարավորինս նվազեցնել անհարգելի բացակայությունները:

Ուս. տարվա ընթացքում
Տնօրեն, ՄԿԱ գծով տնօրենի տեղ.
Դասվարներ, դասղեկներ

4. Կիսամյակը երկու անգամ հրավիրել դասարանական-ծնողական ժողով: Ամուր հիմքերի վրա դնել աշակերտ-դպրոց-ընտանիք կապը: Ծնողների համար կարդալ մանկավարժական թեմաներով զրույցներ:

Ուս. տարվա ընթացքում
Տնօրեն, ՄԿԱ գծով տնօրենի տեղ.
Դասվարներ, դասղեկներ

5. Յուրաքանչյուր դասարանում ստեղծել ծնողական խորհուրդ (բաղկացած 3-5 հոգուց), ապահովել ծնողխորհրդի մասնակցությունը ուսումնական գործընթացի կազմակերպմանը:

Դասվարներ, դասղեկներ

Դպրոցում գործում են հետևյալ արտադասարանական խմբակները

| N | Խմբակի ղեկավար | Խմբակի ծրագրի անվանումը | Խմբակի անվանումը | Օրը, ժամը |
|---|---|---|---|---|
| 1. | | | | |
| 2. | | | | |
| | | | | |

ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Դաստիարակչական ողջ աշխատանքի հիմքում դնել ուսուցման ու դաստիարակության միասնությունը: Այդ նպատակով արտադասարանական դաստիարակչական աշխատանքները կազմակերպել այնպես, որ լիարժեք օգտագործվի նիստերի դահլիճը, որ յուրաքանչյուր դասարան, յուրաքանչյուր խմբակ տարվա ընթացքում նվազագույնը մեկ անգամ հանդես գա համադպրոցական նախաձեռնությամբ:

ուստարի
դասվար-դասղեկներ խմբավարներ

- Դասարանական և համադպրոցական միջոցառումների ծրագիրը կազմելիս՝ հաշվի առնել հետաքրքրություններն ու ցանկությունները:

ուստարի
դասվար-դասղեկներ

Երեխաների դպրոցական, արտադպրոցական գործունեությունը, նրանց հաջողություններն ու ձեռքբերումները ներկայացնել ծնողներին:

ուստարի
դասվար-դասղեկներ

- Սերտ կապ ստեղծել արվեստի դպրոցի հետ, պայմաններ ստեղծել աշակերտներին ընդգրկելու տարբեր խմբերում:

ուստարի
տնօրեն, փոխտնօրեն,
արտադպրոցական հիմնարկների ղեկավարներ

- Երգչախմբի, ասմունքի խմբակների գործունեությունը նպատակաուղղել սովորողների գեղագիտական դաստիարակության բարձրացմանը:

ուստարի
խմբավարներ

- Հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնահատկությունները՝ կիրառել արտադասարանական աշխատանքների առավել ակտիվ ձևեր:

ուստարի
խմբավարներ

Սպորտային արտադասարանական խմբակների գործունեությունը նպատակաուղղել աշակերտների ֆիզիկական զարգացմանը, ընդունակությունների զարգացմանը:

ուստարի
խմբավարներ

- Ակտիվացնել աշակերտական խորհրդի գործունեությունը, նրանց մասնակից դարձնել հերթապահության, շենքի, շրջապատի, գույքի պահպանման և վերանորոգման աշխատանքներին:

Սեպտեմբեր

6. Սահմանել բաց դռների օր, ապահովել ծնող-ուսուցիչ կապը:

Ուս. տարվա ընթացքում

Տնօրեն, ՄԿԱ գծով տնօրենի տեղ.

Դասվարներ, դասղեկներ

7. Ուսումնասիրել աշակերտների բնակարանային պայմանները:

Ուս. տարվա ընթացքում

Դասվարներ, դասղեկներ

8. Սիստեմատիկ հետևել աշակերտների կողմից վարքի կանոնների կատարմանը:

Ուս. տարվա ընթացքում

Դասվարներ, դասղեկներ

9. Բոլոր դասարաններում անցկացնել զրույցներ փողոցային երթևեկության կանոնների վերաբերյալ:

Ուս. տարվա ընթացքում

Դասվարներ, դասղեկներ

10. Ամիսը մեկ անգամ հրավիրել դասվար-դասղեկների խորհրդակցություն:

Տնօրեն, ՄԿԱ գծով տնօրենի տեղ.

11. Արտադասարանական աշխատանքների միջոցով օգնել տարբեր առարկաների ուսուցիչներին՝ երեխաների՝ ուսումնական առարկաների նկատմամբ ճանաչողական հետաքրքրությունների զարգացման գործում:

Ուս. տարվա ընթացքում

Դասվարներ, դասղեկներ

ուստարի
ՄԿԱ գծով տնօրենի տեղ
աշակերտական խորհուրդ

Աշակերտական խորհրդի նպատակը համարել սովորողների կրթությունն ու դաստիարակությունը: Միստեմատիկ քննարկել չառաջադիմող, կարգապահական խախտումներ թույլ տվող, դպրոցական գույքն ու շենքը փչացնող երեխաների հարցը: Նրանց ենթարկել համապատասխամ պատժի:

ուստարի
ՄԿԱ գծով տնօրենի տեղ
ԴԱԿ

- Կազմակերպել հանդիպումներ մշակույթի գործիչների հետ:

## ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ

- Հրավիրել աշակերտական ընդհանուր ժողով, լսել մեկ տարվա կատարած աշխատանքների հաշվետվությունը, ընտրել դասարանական խորհուրդներ, ձևավորել աշակերտական խորհուրդը, կազմակերպել աշակերտական խորհրդի նախագահի ընտրությունը: Ստեղծել համապատասխան հանձնախմբեր
- Հնարավորության սահմաններում սոցիալապես անապահով ընտանիքի երեխաներին ապահովել անվճար դասագրքերով
- Սահմանել վերահսկողություն պարբերաբար ուշացումների և անհարգելի բացակայությունների նկատմամբ , ժամանակին կանխել դրանք
- ՈՒշադրության կենտրոնում պահել ետ մնացող աշակերտներին այն հաշվով, որ բոլորն էլ ընդգրկվեն դպրոցում
- Աշխատանք տանել 5-9-րդ դասարանների դժվար դաստիարակվող երեխաների և նրանց ծնողների հետ
- Դժվար առաջադիմող աշակերտներին, ըստ նրանց ընդունակությունների ու հետաքրքրությունների , ընդգրկել արտադասարանական, արտադպրոցական խմբերում, ակումբներում,սեկցիաներում
- Ստեղծել <<մասնագիտական զարգացման դպրոց>> աշակերտների մասնագիտական կողմնորոշումը ճիշտ նպատակաուղղելու համար
- Կազմակերպել առարկայական շաբաթներ, միամսյակներ: Առարկայական միամսյակներին

ա.կազմակերպել ցերեկույթներ, բաց դասեր

բ.լույս ընծայել պատի թերթ

գ.հրավիրել մասնագետներ տարբեր հաստատություններից (ԳՊՀ, Պետական քոլեջ, Գյուղատնտեսական քոլեջ)

- Անցկացնել <<Գիտակների մրցույթ>>
- Երեխաներին ապահովել շախմատի դասագրքերով, կատարել ուսումնասիրություններ, դասալսումներ, անհրաժեշտության դեպքում ցույց տալ մեթոդամանկավարժական օգնություն
- Յուրաքանչյուր ամսվա վերջում տնօրենության նիստում քննարկել սովորողների հաճախումների

հարցը

- Ստուգել դժվար առաջադիմող աշակերտների հետ տարվող աշխատանքները, քննարկել տնօրինության ընդլայնված նիստերում
- Ուսումնասիրել դասղեկների կատարած աշխատանքը:Արդյունքները քննարկել դասղեկների մեթոդմիավորումում, աշխորհրդի նիստերում
- Վերահսկել աշխորհրդի գործունեությունը, նրանց մասնակից դարձնել դպրոցի առջև դրված խնդիրների լուծմանը

## ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

- Հրավիրել դասարանական ծնողական ժողովներ

Կիսամյակը երկու անգամ

ՄԿԱ գծով տն.տեղ., դասվար-դասղեկներ

- Նախապատրաստել ընդհանուր ծնողական ժողով և քննարկել դպրոցի առջև ծառացած համատեղ լուծման ենթակա հարցերը

սեպտեմբեր

տնօրեն, ծնողական խորհուրդ

- Կազմել ծնողների համար անցկացվող զրույցների և զեկուցումների թեմատիկ պլան

սեպտեմբեր

տնօրեն, ՄԿԱ գծով տն. տեղ.

- Ծնողների ցանկությամբ, դասղեկի խորհրդով անցկացնել խորհրդատվություն

Տարվա ընթացքում

Տնօրեն, ծնողական խորհուրդ

- Կազմակերպել հանդիպումներ այն մարդկանց հետ,ովքեր դրական ազդեցություն ունեն երեխայի վրա

Տարվա ընթացքում

Ծնողական խորհուրդ

- Ծնողական ժողովների թեմաների ընտրության ժամանակ հաշվի առնել երեխաների տարիքային առանձնահատկությունները, դասարանի և դպրոցի խնդիրները, դպրոցի և ընտանիքի միասնական պահանջները

Տարվա ընթացքում

Ծնողական խորհուրդ

- Ծնողական խորհրդի միջոցով հետևել աշակերտների տնային ռեժիմին՝ աշակերտների տարիքային առանձնահատկություններին ոչ հատուկ կինոնկարներ դիտելու

**ուստարվա ընթացքում**
**ծնողական խորհուրդ**

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎՈՂ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԿԱՆԽՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Ուսուցիչներին և դպրոցականներին ոստիկանության առօրյային ծանոթացնելու նպատակով արձանագրել «Կրթության» պաշտոնաթերթում ստեղծվող «Մեր ոստիկանությունը» էջում:

ուստարի, ուսուցիչներ

- Կազմակերպել այցելություններ ոստիկանության բաժին, դպրոցականներին ծանոթացնել բաժնի առօրյային

ուստարի
9-րդ դասարանի աշակերտներ

- 8-9-րդ դասարաններում անցկացնել զրույցներ «Անչափահասը և թմրանյութը», «Աղանդը և անչափահասը» թեմաներով

ուստարի
տնօրեն, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, դասղեկներ

- 1-5-րդ դասարաններում անցկացնել «Ճանապարհային երթևեկության կանոնները» ուսումնական պարապմունքներ

ուստարի
դասվար-դասղեկներ

- Հայտնաբերել հանրակրթությունից դուրս մնացած երեխաների և ընդգրկել դպրոցի առօրյային

ուստարի
փոխտնօրեն, ոստիկանության բաժին
դասվար-դասղեկներ

- Խրախուսել դպրոցի կյանքում ակտիվ մասնակցություն ցուցաբերած ծնողներին

Տարվա ընթացքում

- Տարվա ընթացքում առնվազն երկու անգամ դասարանում դասավանդող ուսուցիչների և ծնողների համար կազմել հարցաթերթիկներ երեխաներին օգնելու նպատակով

դասվար-դասղեկներ

- Պլանավորել ծնողական խորհրդի աշխատանքները

սեպտեմբեր
տնօրեն, ԾԽ

**Ուստարվա ընթացքում**

- Ապահովել դպրոցի և ծնողների համատեղ գործունեությունը սովորողների ուսուցման ու դաստիարակության բարելավման գործում

**Ուստարվա ընթացքում**

**Տնօրեն**

- Ծնողներին մասնակից դարձնել սովորողների արտադասարանական, արտադպրոցական դաստիարակչական աշխատանքներին

**ուստարվա ընթացքում**

**ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ**

- Բարելավել մանկավարժների գործունեության մակարդակը ծնողների շրջանում: Առաջին դասարանում սովորող աշակերտների ծնողների հետ կատարել անհատական աշխատանք

**ուստարվա ընթացքում**

**ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ և ծնողական խորհուրդ**

- Ծնողներին ընդգրկել դասագրքերի բաշխման և վարձավճարների գանձման գործին

  Ժամանակին ներկայացնել դասագրքերի հայտը, ստանալ դասագրքերը, բաշխել աշակերտներին, ստանալ գումարները և կատարել մուծում

**տարեվերջ-տարեսկիզբ**

տնօրենություն, գրադարանավար, ծնողական խորհուրդ

- Հաճախակի կազմակերպել այցելություններ ընտանիքներ՝ կապված երեխաների ուսման առաջադիմության, կարգապահության հարցերի հետ

**2023 - 2024 ուստարի**

ԱՇԽԱՏԱՆՔ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԵՏ

- Օգնել գրադարանավարին կազմելու և հաստատման ներկայացնելու տարեկան աշխատանքային պլանը

**օգոստոս**
**տնօրեն, ՄԿԱ գծով փոխտնօրեն**

- Դպրոցի հնարավորություններից ելնելով՝ հարստացնել գրադարանային ֆոնդը
  Վերանորոգել գրադարանային ֆոնդում եղած գրքերն ու դասագրքերը

**օգոստոս**
**տնօրեն, գրադարանավար**

- Ստեղծել թեմատիկ քարտարաններ, ղեկավարել կրտսեր դպրոցի ընթերցանությունը

**ուստարվա ընթացքում**

- Դասղեկների հետ վերջնականապես ճշտել սոցիալապես անապահով, միակողմանի ծնողազուրկ և անապահով ընտանիքների, ԱՀ-ից եկած երեխաների ցուցակները և հնարավորության սահմաններում ապահովել անվճար դասագրքերով

**սեպտեմբեր**
**ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, դասվար-դասղեկներ**
**ծնողխորհրդի նախագահ**
**գրադարանավար**

- Դասագրքերով ապահովել աշակերտներին, մշակել համապատասխան փաստաթղթեր

**սեպտեմբեր**
**տնօրեն, գրադարանավար**

## ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

- Աշակերտների մեջ դաստիարակել բարոյական վարքի սովորույթներ, յուրացնել գիտելիքներ բարոյական գիտակցման, բարոյականության կանոնների մասին
- Ստեղծել բարոյական պատկերացումների հասկացությունների և արժեքների համակարգ
- Ձևավորել անձի բարոյական զարգացում և այն շարունակել ամբողջ կյանքում
- Ստեղծել շփումներ, հաղորդակցումներ, որոնք անառարկելիորեն ներգործում են աշակերտների գործողությունների, արարքների վրա, ձևավորում նրա անձը
- Կազմակերպել զրույցներ մարդու բարոյական հատկանիշներից կարևորագույնների մասին նրանց մղելով լինել բարի, կարգապահ, անկեղծ, խելացի, ճշտապահ, հայրենասեր, անշահախնդիր, պատասխանատու, հանդուրժող

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

- Բարձրացնել աշխատանքային դաստիարակության, աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքների որակը
- 8-9-րդ դասարանների աշակերտների համար կազմակերպել տարբեր միջոցառումներ, անցկացնել զրույց «Պահանջվող մասնագիտություններ» թեմայով
- Աշակերտների մասնագիտական կողմնորոշումը ճիշտ նպատակաուղղելու համար անցկացնել տեսաֆիլմերի դիտում
- Աշակերտներին տրամադրել համապատասխան տեղեկատվություն մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ

## ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Կազմակերպել փառատոն միջին և բարձր դասարանների միջև(ինքնագործ)
2. Տեխնոլոգիայի դասերին ստեղծել վահանակներ՝ ցուցադրելու աշակերտների ինքնուրույն աշխատանքները
3. Ստեղծել գեղագիտական սրահ և ցուցահանդես և ցուցադրել նկարչության և կերպարվեստի ժամերի նյութերը
4. Կազմակերպել էքսկուրսիաներ դեպի թանգարաններ, պատկերասրահներ

## ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Կազմակերպված անցկացնել հայոց բանակի ծննդյան տարեդարձը
2. Կազմակերպել հանդիպում Արցախյան հերոսամարտի մարտիկների հետ
3. Դպրոց հրավիրել զորամասի հրամանատարներին
4. Նպաստել ռազմագիտության դասերի արդյունավետ անցկացմանը
5. Մեծ ուշադրություն դարձնել «Մարտական փառքի» անկյան պահպանմանը:
6. Կազմակերպել միջոցառումներ՝ մրցութային կարգով՝ այլ դպրոցի հետ
7. Կազմակերպել հանդիպումներ ԼՂՀ-ում զինվորական ծառայություն կատարած համաքաղաքացիների հետ
8. Նշել տոնացույցով հիշատակի օրերը, նշանավոր ռազմական գործիչների հոբելյանական տարելիցները
9. Կազմակերպել հանդիպումներ Հայրենական մեծ պատերազմի վետերանների, հայկական բանակի հրամանատարների, Արցախի ինքնապաշտպանական մարտերի մասնակիցների հետ

10. Ուսումնասիրել դպրոցի այն շրջանավարտների կյանքն ու գործունեությունը, որոնք զոհվել են Արցախյան, քառօրյա, 44-օրյա պատերազմներում, ձնավորել անկյուն, այցելություն կատարել զինվորական պանթեոն

## ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

- Սովորողների ֆիզիկական դաստիարակության բարելավման նպատակով մարզադահլիճը հնարավորության սահմաններում հարստացնել մարզական գույքով

**օգոստոս-սեպտեմբեր**
**տնօրեն, տնտ. գծով տնօրենի տեղակալ**

- Կանոնավոր կերպով անցկացնել առավոտյան լիցքային վարժություններ

**ուստարվա ընթացքում**
**ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, ուսուցիչներ**

- Դպրոցական բուժքրոջ միջոցով պարզել աշակերտների առողջական վիճակը, ստեղծել ֆիզկուլտուրայի հատուկ խմբեր, հետևել պարապմունքների անցկացմանը

**սեպտեմբեր**
**ուս. գծով տնօրենի տեղակալ**

- Կահավորել բուժկաբինետը, ձեռք բերել առաջին օգնության անհրաժեշտ դեղամիջոցներ

**սեպտեմբեր**
**ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ**
**բուժքույր**

- Կազմակերպել սպորտլանդիաներ կրտսեր և միջին դպրոցում

**նոյեմբեր-ապրիլ**
**ֆիզկուլտուրի ուսուցիչներ**

- Պարբերաբար կազմակերպել աշակերտների կողմից մարզական նորմատիվների հանձնում

**սեպտեմբեր-մայիս**
**ֆիզկուլտուրի ուսուցիչներ,**
**դասղեկներ**

- Անցկացնել միջդասարանական, միջդպրոցական մրցումներ: Այն կազմակերպել բարձր մակարդակով, նախապես իրազեկ դարձնել դասղեկներին և աշակերտներին

**հոկտեմբեր-մայիս**
**ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, ֆիզկուլտուրի ուսուցիչներ, դասղեկներ**

- Ուսումնական տարվա սկզբին և վերջում տնօրենության նիստերում լսել դպրոցի բուժքրոջ

հաշվետվությունը՝ աշակերտների առողջական վիճակի և բուժական միջոցառումների իրականացման արդյունքների մասին

**սեպտեմբեր, մայիս**
**դպրոցի բուժքույր**

- Բժշկի և բուժքրոջ միջոցով անցկացնել զրույց բարձր դասարանների սովորողների օրվա ռեժիմի, անձնական հիգիենայի մասին

**ուստարվա ընթացքում**
**ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, դպրոցի բուժքույր**

- Սպորտային արտադասարանական խմբակների գործունեությունը նպատակաուղղել աշակերտների ֆիզիկական զարգացմանը, ընդունակությունների բացահայտմանը
  Այդ նպատակով՝

1. Ուսումնական պարապմունքները անցկացնել սպորտային համազգեստով
2. Համախակի կազմակերպել ներդպրոցական մրցումներ՝ սպորտի տարբեր ձևերից
3. Մասնակցել քաղաքային, տարածաշրջանային, մարզային, հանրապետական մրցումներին, մասնակցել քաղաքային ավանդական հանդիսություններին

**ուստարվա ընթացքում**

## ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

- Բնապահպանական դաստիարակության և էկոլոգիական կրթության իրականացման համար
  ապահովել մարդ-հասարակություն-բնություն փոխազդեցությունը
- Կազմակերպել էքսկուրսիաներ բնության գրկում՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով
  շրջակա միջավայրի պահպանմանը, մաքրության ու խնամքի ապահովմանը
- Մասնակցություն դպրոցամերձ տարածքի մաքրման աշխատանքներին
- «Մաքուր պահենք մեր շրջապատը, բնությունը» թեմայով դաստիարակչական դասեր, զրույցներ
- Սովորողների մոտ ձևավորել հոգատար վերաբերմունք բնության և նրա ստեղծած բարիքների
  նկատմամբ
- Սովորողների աշխատանքային հմտությունների և վերաբերմունքի խթանում՝ տարբեր
  իրավիճակներում անհատական անվտանգության շրջակա միջավայրի պահպանման համար
- «Պահպանենք բնությունը, պահպանենք կյանքը» թեմայով դաստիարակչական դասեր, զրույցներ

# Նախատեսվող աշխատանքները ըստ դաստիարակության բնույթի

2023 - 2024

Հաստատում եմ

Տնօրեն՝ Հր. Գրիգորյան

31.08 2023 թ.

# Վաղարշապատի Գ. Նժդեհի անվան թիվ 8 հիմնական դպրոցի 2023 -2024 ուստարվա միջոցառումների պլան

| Աշխատանքի ուղղվածությունը և խնդիրները | ԱՄԻՍՆԵՐ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս |
| ***Քաղաքացիական , բարոյական դաստիարակությու ն***<br>Քաղաքացիական ակտիվ դիրքորոշման, պատասխանատվու թյան, արժանապատվությ ան ձևավորում, հարգանք երկրի մշակույթի և պատմության հանդեպ | Գիտելիքի օր<br><br>Դասղեկի ժամ նվիրված Անկախությանը 7Բ դասարան դասղեկ՝ Հռ. Գևորգյան<br><br>Ուխտագնացու թյուն Սուրբ Գայանե եկեղեցի<br><br>8Բ դասարան դասղեկ՝ Մ. Հակոբյան,գրա-կանության ուսուցչուհի՝ Ս. Բաբայան<br><br>Հարգանքի | Ուսուցչի տոն<br>ՄԿԱ /ԴԱԿ<br>«Էջմիածնի տոն»<br>Քաղաքային միջոցառում<br>---------------<br>Զրույց<br>Էջմիածին քաղաքի շուրջ<br>---------------<br>Ա տարի շնորհանդես<br>1Ա,1Բ դասարան-ներ | Դասղեկի ժամ 6-րդ դասարա-նում՝ «Ի՞նչ կփոխեի իմ դպրոցում» | Նոր տարի, Սուրբ Ծնունդ<br>Զրույց<br>Երկրաշար-ժի մասին<br><br>Տարեհանդես | Հայոց Բանակի օր | Միջոցառում՝<br>Տյառնընդառաջ, Սուրբ Սարգսի օր 7 Ա դասարան դասղեկ՝<br><br>Ա. Գրիգորյան<br>---------------<br>Միջոցառում՝<br><<Մայրենի լեզվի տոն>><br>5Ա դաս.<br>Դասղեկ՝ Էլ. Սահակյան<br>---------------<br>Դասղեկի ժամ<<Գիրք նվիրելու օր>>՝<br>5Բ դաս.<br>դասղեկ՝ Լ. Սարգսյան<br>---------------<br><<Եկ խոսենք հայերեն>>բլից | Կանանց միամսյակին նվիրված միջոցառումն եր,<br>Դասղեկի ժամ<br>Զրույց<br>Աղանդավորո ւթյան վնասները<br>7Բ դաս.<br>Դասղեկ՝Հռ. Գևորգյան<br>---------------<br>Պատարագի պատրաս-տում<br>Մարտի 8<br><br>Աշ. Խորհուրդ | Դասղեկի ժամ<br><<Սուրբ Հարություն>><br>3Բ դաս.<br>Դասղեկ՝ Ա. Հայրապետյան<br><br>Ապրիլյան քառօրյային նվիրված զրույց,<br>Հայոց Եղեռնին նվիրված միջոցառում<br>---------------<br>Միջոցառում՝<br><br>«Մայրիկիս տոնն է»<br><br>3 Ա դասարան<br><br>Դասվար՝ Լ. Սահակյան | Զրույց<br>Աշխատա-վորների օր,<br><br>Միջոցա-ռում՝<br>«Իմ փոքրիկ Հայաստան»<br>1Ա դասարան դասվար՝ Ռ. Սահակյան |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | տուրք բոլոր ժամանակների մեր սուրբ նահատակների հոգիների համար<br>9Բ դասարանի դասղեկ՝ Ն. Գրիգորյան<br>7Բ դասարանի դասղեկ՝ Հ. Գևորգյան | Ռ. Սահակյան<br>Ս.Հովհան-նիսյան | | | | հարցում՝ԴԱԿ<br><<Քրիստոնեության ջատագովը>> դասղեկի ժամ 6-րդ դասարանում դասղեկ՝ Ս. Բաբայան | | | |
| Գեղագիտական Մշակույթը կրողը,ստեղծագործական ակտիվություն ունեցող անձի ձևավորում | Նկարչական մրցույթ՝ «Իմ Հայաստան» Կավճանկարչություն՝ 1 – 4 դասարաններ | Միջոցառում «Ուսուցչի օր» ՄԿԱ,/ԴԱԿ<br>Թարգման-չաց տոն,<br>---------------<br>Վիկտորինա<br>Հայրը լեզու և գրակ. Առարկաների g 8 և 9 դասարան-ների միջև | Մրցույթ՝ Աշնան գույները<br>1- 9 –րդ դասարան-ներ | Միջոցա-ռում Ամանորը տարրական դպրոցում Ամանորյա անկյուններ ի ձևավորում 5-9-րդ դասարան<br>Ցուցապաստառ Գրադարանավար | Ազգային ավան-դույթներ և տոներ 8 Ա դասարան դասղեկ՝<br>Գ. Նազարյան | Միջոցառում գրադարանա-վար<br>Դասղեկի ժամ <<Գրքի տոն>>2Ա դաս. դասղեկ Գ. Թագուշյան<br>------------------<br>Միջոցառում 2Բ դաս. դասղեկ՝ Ն. Հարությունյան <<Գրավաճառ> | Ամունքի մրցույթ «Մայրս» Գրադարանա-վար | Բնության զարթոնքին նվիրված միջոցառումներ<br>Միջոցառում Եզդիները տոնում են Նոր տարին<br>/ՄԿԱ /ԴԱԿ | Այցելություն որևէ մշակութա-յին օջախ |
| Ֆիզիկական առողջություն Ֆիզիկական զարգացմանն ուղղված | Ցուցապաստառ առողջ և օգտակար սնունդ՝ բուժքույր | Զրույց Առողջ և օգտակար սնունդ 1 – 4 դասարան- | Զրույց Հիգիենայի առանձնահատկություն-ները | ՄԻԱԿ-ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օր | Դասղեկի ժամ<br>4Ա դասարան | Զրույց Վտանգավոր սովորույթներ (ծխախոտի,թմրանյութի,ալկո- | «Օդային տագնապ» վարժանքի անցկացում | «Ուժեղներ, ճարպիկներ» խաղ -մրցույթ<br>--------------- | Արշավներ էքսկուրսի-աներ<br>« Առանց |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| պայմանների ստեղծում, վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում | | ներ | 1-9 դասարան-ներ | Զրույց բուժքույր<br>Տարհանում<br><br>«Ինչպես պաշտպան-վել երկրա-շարժից»<br>*Ֆիլմի դիտում*<br>Կազմակեր-պիչ<br><br>Զրույց Բնական աղետներ 3 – 4 դ.<br>-----------<br>Զրույց Բնական արհավիրք - ներ 5 – 7 դ. ՄԿԱ /ԴԱԿ | դաստիարակ՝ Ն.Վարդանյան<br><br><<Ատամ-ների խնամք>> | հոլի ազդեցությունը) բուժքույր | ---------------<br>Դասղեկի ժամ Թմրամոլությունը չարիք է 9-րդ Ա դասարան Դասղեկ՝ Ա. Պետրոսյան | Դասղեկի ժամ Ծխախոտի բացասական հետևանքները<br><br>8-րդ Բ դասարան<br><br>Դասղեկ՝ Մ. Հակոբյան | ծխախոտի» /մայիսի 21/ Զրույց բուժքրոջ հետ<br>---------------<br>Զրույց Ծխելը վնասա-կար է առողջութ-յանը 6 – 7 – 9 դասա-րաններ |
| <u>*Աշխատանքային դաստիարակությու ն*</u><br>Աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի | Զրույց՝ Ինչ է ներդպրոցա-կան կարգապահությունը | Համայնքա-յին շաբաթօրյակ | Զրույց՝ «Իմ կատարած լավ գործը» | Ցուցահան-դես՝ Ստեղծագործում են աշակերտ-ները | Նկարների ցուցահան-դես «Ով աշխատի նա կուտի» | Քննարկում՝«Աշ խատելիս հիվանդ է, ուտելիս՝ | Բացիկների պատրաս-տում 2- 4 դասարան- | Համադպրոցա-կան շաբաթօրյակ | Հանդիպում տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց հետ |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| խթանում, մասնագիտական կողմնորոշում | | | | 5 -9 դասարաններ | 1 – 4 դասարաններ | առողջ | ներում<br>Մարտի 8 | | |
| *Իրավական դաստիարակությու ն*<br>Իրավական գիտակցության և հանդուրժողականության խթանում | Դպրոցի կարգապահական կանոններին, իրվավունքներին ու պարտականություններին իրազեկում<br>Զրույց 5 -9 դասարաններում «Իմ իրավունքները» /կազմակերպիչ /<br>------------------<br>Հանդիպում ոստիկանության աշխատակիցների հետ,<br>Զրույց Ճանապարհային երթևեկության կանոններ 1-4 դասարան /դասվարներ/ | Զրույց Կոնֆլիկտների հաղթահարում<br>----------------<br>Ծնողների իրավունք.ու պարտականությունները | Երեխայի իրավունքների հռչակագիր<br>Զրույց «Իմ իրավունքները» 1—4 դասարաններում | Զրույց<br>Մարդու իրավունքների օր<br>5-9 դասարան | Համաձայնություն, Հանդուրժողականություն<br>Դասղեկի ժամ<br><<Տուր ձեռքդ ընկեր>> 9Բ դասարան, դասղեկ՝ Ն. Գրիգորյան | Դասղեկի ժամ<br>Քննարկում «Ինչպե՞ս լուծել երեխաների կոնֆլիկները դպրոցում»<br>7Բ դասարան դասղեկ՝ Հռ. Գևորգյան | Հանդիպում ոստիկաններ ի հետ<br>9Ա/Բ դասարաններ | Ցուցապաստառ «Հանդուրժողականություն» թեմայով<br>4Ա դասարան դասվար՝ Ն. Վարդանյան | Դասղեկի ժամ<br>«Հանդուրժողականություն» թեմայով<br>1Բ դասարան դասվար՝ Ս. Հովհաննիսյան |
| *Էկոլոգիական դաստիարակությու ն*<br>Բնության հանդեպ | Կանաչ անկյունների ստեղծում<br>1-9 | Ծառատունկ | Բնութ-յան պահպանություն | Բնության արհավիրքները | Դասղեկի ժամ | «Բույսերի անզուգական աշխարհը» | Ծառատունկ | Զրույց «Օզոնային շերտի հիմնախնդիր- | Հուշարձանի մաքրման աշխա- |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հոգատար վերաբերմունքի ձևավորում | դասարաններ | | | | «Բնությունը մեր տունն է»<br><br>4Բ դասարան դասղեկ՝ Ա. Ղոմաշյան | *Տեսաֆիլմի դիտում 2*<br><br>*1 – 4 դասարաննե-րում* դասվարներ | | ները» | տանքներ<br><br>5-9 դասարան-ներ |